ԲԱԺԻՆ 3. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ
РАЗДЕЛ 3: МЕТОДИКА ПРЕПОДАВАНИЯ
SECTION 3: TEACHING METHODICS

378.016 : 811.19 *https://orcid.org/0000-0002-7467-7087* **DOI:10.46991/ai.2023.1.145**

APPLICATION OF LEARNING TECHNOLOGY IN COOPERATION IN THE UNIVERSITY COURSE OF ARMENIAN LANGUAGE

Meri Hovhannisyan
Academic Secretary of Yerevan State University,
Ph.D. in Philology, Armenia
meri.hovhannisyan@ysu.am

Summary

The purpose of the study is to clearly define the technology of learning in cooperation, methods for developing cooperation skills, the rules for implementing learning in cooperation, the stages of its implementation and the features of using the Armenian language in the university course. Our task is to reveal the essence of the technology of learning in cooperation, the advantages and restrictions of the methods implemented on the basis of the principles of cooperation, the pedagogical problems that arise when using these methods and ways of their solution. The general scientific logical method, as well as a private or special method of analysis and comparison was used in a comprehensive study of the problem put forward within the framework of the topic. The formation of cooperation skills as an alternative pedagogical approach also leads to a change in the functions of a teacher.

The main task of the educator becomes the creation of appropriate conditions for the development of student's cooperation skills: the creation of a learning environment that implies a democratic, respectful style of communication, the active participation of all the students, taking into account the characteristics and level of knowledge of each student.

The use of technology of learning in collaboration creates the conditions for the assessment of the effectiveness of learning. There are different methods of development of cooperation skills: "Team academic performance of students", "Mosaic", "Tour in art gallery", "Free composition in five minutes", etc. The use of the indicated methods supposes the encouragement of thoughts and ideas, the absence of any criticism, the equality of students, taking part in the lesson, record of thoughts and aimed at the solution of any educational task. It is advisable to apply these methods at different stages of the lesson in any subject in order to solve a specific educational problem and develop students' creative thinking, imagination, self-confidence, and the formation of cooperation skills.

As a result of the study, we came to a conclusion that the technology of learning in cooperation and methods containing the elements of learning in cooperation contribute to the creation of opportunities for the achievement of success for each student, as well as stimulating and welcoming atmosphere in the classroom. The effectiveness of learning in cooperation is conditioned by the small size of the group of participants, the analysis of the proposed solutions and tasks and their practical application in the future.

Keywords: learning process, learning technology, learning method, learning in cooperation, technology of learning in cooperation, cooperation skills, record of thoughts, creative thinking, "Team academic performance of students", "Mosaic", "Tour in art gallery", "Free composition in five minutes", etc.

ПРИМЕНЕНИЕ ТЕХНОЛОГИИ КООПЕРАТИВНОГО ОБУЧЕНИЯ В ВУЗОВСКОМ КУРСЕ АРМЯНСКОГО ЯЗЫКА

Мери Оганнисян
ученый секретарь Ереванского государственного университета,
канд. филол. наук, доцент,
Республика Армения,
meri.hovhannisyan@ysu.am

Аннотация

Цель исследования – четко определить технологию кооперативного обучения, методы развития навыков сотрудничества, правила осуществления данного метода обучения, этапы его реализации и

особенности применения в вузовском курсе армянского языка. Наша задача – раскрыть сущность технологии кооперативного обучения, преимущества и ограничения методов, реализуемых на основе принципов сотрудничества, педагогические проблемы, возникающие при применении данных методов и пути их решения. При комплексном изучении проблемы, выдвинутой в рамках темы, использовались общенаучный логический метод, а также частный или специальный метод анализа и сопоставления. Формирование навыков сотрудничества как альтернативного педагогического подхода приводит также к изменению функций педагога.

Главной задачей воспитателя становится создание соответствующих условий для развития навыков сотрудничества обучающихся: создание учебной среды, предполагающей демократичный, уважительный стиль общения, активное участие всех учащихся с учетом особенностей и уровня знаний каждого.

Использование технологии кооперативного обучения создает условия для оценки эффективности обучения. Существуют разные методы развития навыков сотрудничества: «Командная успеваемость учащихся», «Мозаика», «Экскурсия по картинной галерее», «Свободное сочинение-пятиминутка» и др. Использование указанных методов предполагает поощрение мыслей и идей, отсутствие какой-либо критики, равенство учащихся, принимающих участие в уроке, запись мыслей и нацелено на решение какой-либо учебной задачи. Указанные методы целесообразно применять на разных этапах урока по любому предмету с целью решения конкретной учебной задачи и развития у учащихся творческого мышления, воображения, уверенности в себе, формирования навыков сотрудничества.

В результате исследования мы пришли к выводу, что технология кооперативного обучения и методы, содержащие элементы обучения в сотрудничестве, способствуют созданию для каждого учащегося возможностей достижения успеха и стимулирующей и доброжелательной атмосферы в классе. Эффективность метода кооперативного обучения обусловлена небольшими размерами группы участников, анализом предложенных решений и задач и возможности их практического применения в дальнейшем.

Ключевые слова: учебный процесс, технология обучения, метод обучения, кооперативное обучение, технология кооперативного обучения, навыки сотрудничества, запись мыслей, творческое мышление, «Командная успеваемость учащихся», «Мозаика», «Экскурсия по картинной галерее», «Свободное сочинение-пятиминутка».

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

Հովհաննիսյան Մերի
ԵՊՀ գիտ. քարտուղար, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
Երևանի պետական համալսարան,
Հայաստան
meri.hovhannisyan@ysu.am

«Ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի գալիս առանց համագործակցության...»:
Ջեյմս Ուայթսոն

Հետազոտության նպատակներն են հստակորեն սահմանել համագործակցային ուսուցման տեխնոլոգիան, համագործակցային կարողությունների զարգացման մեթոդները, անցկացման կանոնները, իրականացման փուլերն ու կիրառման առանձնահատկությունները հայոց լեզվի բուհական դասընթացում: Մեր ուսումնասիրության խնդիրն է բացահայտել համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի էությունը, համագործակցային սկզբունքներով իրականացվող մեթոդների առավելությունները, սահմանափակումները, մեթոդների կիրառման ժամանակ դրսևորվող մանկավարժական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:

Թեմայի շրջանակում առաջադրված խնդրի համապարփակ ուսումնասիրության ընթացքում կիրառվել են գիտական ընդհանուր՝ տրամաբանական, ինչպես նաև մասնավոր կամ հատուկ՝ վերլուծության ու համեմատության մեթոդներ:

Համագործակցային կարողությունների ձևավորումը՝ որպես մանկավարժական այլընտրանքային մոտեցում, փոխում է նաև մանկավարժի գործառույթները: Մանկավարժի գլխավոր խնդիրն է դառնում սովորողի համագործակցային հմտությունների զարգացման համար համապատասխան պայմանների՝ ուսումնական միջավայրի ստեղծումը, որը ենթադրում է հաղորդակցության ժողովրդավարական, հարգալից ոճ, բոլոր սովորողների ակտիվ մասնակցություն՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի առանձնահատկությունները, իմացության մակարդակը: Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման ու արժևորման համար: Գոյություն ունեն համագործակցային կարողությունների զարգացման տարբեր մեթոդներ՝ «Սովորողների թիմային առաջադիմություն», «Խճանկար», «Շրջագայություն պատկերասրահում», «Հինգրոպեանոց ազատ շարադրանք» և այլն: Նշված մեթոդների կիրառումը ենթադրում է մտքերի, գաղափարների խրախուսում, ցանկացած քննադատության բացակայություն, դասին մասնակից սովորողների հավասարություն, մտքերի գրառում և նպատակաուղղված է ուսումնական որևէ խնդրի լուծմանը: Նշված մեթոդները նպատակահարմար է կիրառել ցանկացած առարկայի դասի տարբեր փուլերում՝ ուսումնական կոնկրետ խնդիր լուծելու և սովորողների ստեղծագործական մտածողությունը, երևակայությունը զարգացնելու, ինքնավստահություն, համագործակցային հմտություններ ձևավորելու նպատակով:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ համագործակցային ուսուցման տեխնոլոգիան ու համագործակցային ուսուցման տարրեր բովանդակող մեթոդները նպաստում են յուրաքանչյուր սովորողի համար հաջողության հասնելու հնարավորությունների ու լսարանում խրախուսող ու բարյացակամ մթնոլորտի ստեղծմանը: Համագործակցային ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է մասնակիցների ոչ մեծ խմբի ներգրավվածությամբ, առաջարկված լուծումների ու խնդիրների վերլուծությամբ ու հետագայում գործնականում դրանց կիրառությամբ:

Բանալի բառեր: Ուսուցման գործընթաց, ուսուցման տեխնոլոգիա, ուսուցման մեթոդ, համագործակցային ուսուցում, համագործակցային ուսուցման տեխնոլոգիա, համագործակցային կարողություններ, մտքերի գրառում, ստեղծագործական մտածողություն, «Սովորողների թիմային առաջադիմություն», «Խճանկար», «Շրջագայություն պատկերասրահում», «Հինգրոպեանոց ազատ շարադրանք»:

Համառոտ ներածական: Ուսումնական գործընթացի զարգացման, կատարելագործման ուղիների որոնումը հանգեցնում է մանկավարժական տարբեր տեխնոլոգիաների մշակման, որոնց թվում է համագործակցային ուսուցումը, այսինքն՝ ուսուցման գործընթացի այնպիսի կազմակերպումը, որի ընթացքում, սովորողակենտրոն ուսուցման սկզբունքներով պայմանավորված, ստեղծվում են սովորողների համագործակցային խմբեր՝ նպաստելով նրանց ինչպես մտավոր, զգայական, ուսումնական խնդիրները լուծելու ու համագործակցային, ստեղծագործական կարողությունների զարգացմանը, այնպես էլ սոցիալականացմանը:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան ենթադրում է սովորողների ակտիվ գործունեություն՝ խմբային հաղորդակցման հիման վրա կազմակերպված ուսուցում:

Այս պայմաններում սովորողն իր պահանջմունքներով, հետաքրքրություններով դառնում է ուսումնական գործընթացի ակտիվ մասնակից, որն ունակ է գիտակցելու ձեռք բերված գիտելիքների, կարողությունների, հմտությունների, անձնային որակների, արժեքային կողմնորոշիչների նշանակությունը, սոցիալական հմտությունների կարևորությունը արդի աշխարհում, գիտելիքների ձեռքբերման, ամրապնդման, իրական կյանքում դրանց կիրառման, սոցիալական և ինքնաճանաչման հմտությունների զարգացման գործում համագործակցային ու խմբային աշխատանքի հմտությունների կարևորությունը՝ որպես հասարակության մեջ անհատի ինքնադրսևորման ապահովման միջոց: «Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար» [2, էջ 18]:

Համագործակցային ուսուցման ժամանակ մանկավարժը հանդես է գալիս որպես ուղղորդող՝ վերահսկելով խմբային աշխատանքները, ուսումնական գործընթացը վերածելով սոցիալական շփման ու ճիշտ ուղղություն ցույց տալով սովորողներին:

Հիմնախնդիրը: Կրթական ծրագրերը նպատակաուղղված են ուսանողների համակողմանի զարգացմանը [8, էջ 81], որքան արդիական լինեն, այդքան իրատեսական կլինեն դրանց արդյունավետությունն ու փոխանցած հիմնարար գիտելիքները ուսանողներին: Սակայն ժամանակի հրամայականով պայմանավորված՝ ուսումնական գործընթացում առանցքային դեր ունեն ուսուցման արդի մեթոդներն ու տեխնոլոգիաները: Ժամանակակից մի շարք այլ տեխնոլոգիաներ ու մեթոդներ, այդ թվում՝ համագործակցային ուսուցման տեխնոլոգիան, լուծումներ է առաջադրում սովորողներին բացատրական ուսուցումից տանելու դեպի ակտիվ, ժամանակակից տեխնոլոգիաների ու մեթոդների կիրառմամբ ուսուցում, որի դեպքում վերջինս կդառնա ուսումնական գործընթացի ակտիվ սուբյեկտ [5, էջ 89]: Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան հիմնվում է հետևյալ գաղափարի վրա. ուսանողները խմբային աշխատանքի միջոցով պետք է լուծեն ուսումնական խնդիրը՝ ձեռք բերելով համապատասխան գիտելիքներ, իսկ դասախոսը պարտավոր է ղեկավարել նրանց ուսուցման գործընթացը՝ մոտիվացնելով, կազմակերպելով, համակարգելով, ուղղորդելով, խորհուրդ տալով ու վերահսկելով: Այդ ուսուցումը հնարավորություն է ընձեռում, որ սովորողի մոտ ձևավորվի ինքնակրթության հմտություն, նպատակադրման կարողություն, ձևավորվեն ու զարգանան համագործակցային այնպիսի օգտակար հմտություններ, ինչպիսիք են՝ ինքնագնահատումը, ինքնավերահսկումը, փոխադարձ վերահսկումը [5, էջ 89-90]:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառման արդյունքում սովորողը գիտակցված ու իմաստավորված մոտեցում է հանդես բերում ուսումնական գործընթացի նկատմամբ՝ զարգացնելով համագործակցային ու հետազոտական աշխատանք կատարելու բազմաթիվ հմտություններ:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների վերլուծություն: Վերջին տարիներին մի շարք երկրներում, հատկապես մեծ ուշադրություն է հատկացվել համագործակցային ուսուցմանը և հիմնախնդրի տեսական ու մեթոդաբանական հիմնավորմանը (Արնաուդյան Ա., Օհանովա Ի., Գրիգորյան Ք., Դավթյան Մ., Զոհրաբյան Ա., Հովհաննիսյան Գ. և ուրիշներ): Ըստ նշված հետազոտողների՝ համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը կրթական բարեփոխությունների կարևոր պահանջներից է և մեծ ներուժ ունի հատկապես սովորողակենտրոն ուսուցում կազմակերպելու տեսանկյունից [1]:

Համագործակցային ուսուցումը, որը հիմնված է սովորողների համատեղ գործունեության հիման վրա, բնորոշվում է որպես խմբային աշխատանքի առավել բարձր աստիճան, որը հնարավորություններ է ընձեռում ուսումնական բազմաբնույթ նպատակներին հասնելու համար [3, 4]: Ասել է թե՝ համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը մեթոդական համալիր աշխատանքի միջոցով ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացումն է, սովորողների մոտ կրթության ժամանակակից պահանջներին համապատասխան հմտությունների ձևավորումն ու զարգացումը:

Հոդվածի շրջանակում իրականացվող հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է մեթոդաբանորեն հիմնավորել համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառման առանձնահատկությունները հայոց լեզվի բուհական դասընթացում՝ մեթոդական քայլաշարի միջոցով ընդգծելով ուսուցման ժամանակ երևան եկող խնդիրները, դժվարությունները ու առաջարկելով դրանց լուծման ուղիներ:

Հետազոտության նորույթը: Վեր են հանվել համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառման առանձնահատկությունները, կանոնները, սկզբունքները՝ մեթոդական նպատակային ու հաջորդական քայլերի իրացմամբ, նաև զուգադրելով քերականության ուսուցման վերլուծության, համադրական, համեմատության, հակադրության ու ուսուցման ժամանակակից, մասնավորապես փոխգործուն (ինտերակտիվ) մեթոդները:

Հիմնական նյութի շարադրանքը: Համագործակցային մանկավարժական տեխնոլոգիայի կիրառման փուլերը երեքն են՝

1. ուսումնական նյութի նախապատրաստում,
2. սովորողների նախապատրաստում համատեղ աշխատանքին,
3. բուն ուսումնական աշխատանքի ընթացքը:

Այս տեխնոլոգիան միջոց է՝ բոլոր սովորողներին ներգրավելու ուսումնական գործընթաց, նպաստելու, որ թույլ կարողություններով, ցածր առաջադիմությամբ սովորողը աշխատի ու համագործակցի առավել բարձր կարողություններով սովորողի հետ՝ աջակցություն ստանալով վերջինիս կողմից:

Ուսումնական նյութի նախապատրաստական փուլում կատարվում է.

- ուսումնական նյութի ընտրություն, դրա բաժանում տրամաբանական հատվածների,
- առաջադրանքների ձևակերպում,
- համագործակցային խմբով աշխատանքի տեսակի ընտրություն:

Սովորողների նախապատրաստումը համատեղ աշխատանք կատարելու կարողությունների ձևավորման փուլում կատարվում է.

1. ուրիշին լսելու կարողությունների ձևավորում,
2. դիմացինի տեսակետի մասին կարծիք արտահայտելու կարողությունների ձևավորում,
3. սեփական կարծիք արտահայտելու և այն հիմնավորելու կարողությունների ձևավորում,
4. անհրաժեշտ տեղեկատվություն գտնելու կարողությունների ձևավորում,
5. վերլուծություն ու համադրություն կատարելու կարողությունների ձևավորում,
6. անհրաժեշտ եզրահանգումներ կատարելու կարողությունների ձևավորում և այլն:

Բուն ուսումնական աշխատանքի կատարման փուլում կարող է կազմակերպվել փոխադարձ ուսուցում խմբային աշխատանքի միջոցով՝ առաջադրված խնդիրներին ու հանձնարարություններին համապատասխան: Ուսուցման այս տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի հիմքում նշանավոր հոգեբաներ Ջոն Դյուի, Լև Վիգոդսկու ու Ժան Պիաժեյի աշխատություններն են:

Անձնակենտրոն տեխնոլոգիայի տարրերը, ըստ Ջոնսոնների, հիմնականում հինգն են՝ 1.դրական փոխկախվածություն, 2. դեմ առ դեմ փոխազդեցություն, 3. անհատական հաշվետվություն ու պատասխանատվություն, 4. միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ, 5. խմբային գործընթացի մշակում: Հետագայում այդ տարրերին ավելացվեց ևս մեկը [3, էջ 29]: Պասի Սահլբերգը փոխներգործուն (ինտերակտիվ) առաջադրանքը դիտարկեց որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր: Համագործակցության արդյունավետությունը կախված է ուսումնական խնդրին համապատասխան մեթոդների կիրառումից:

Մանկավարժը պետք է հաշվի նստի սովորողների կարծիքների, միմյանց հետ ազատորեն հաղորդակցվելու իրավունքների հետ: Նույն խնդրին է անդրադարձել նաև Պասի Սալիբերգը համագործակցային աշխատանքի առավելությունները նշելիս: Նրա կարծիքով փոքր խմբային աշխատանքն ունի առնվազն երեք առավելություն. Նպաստում է ուսումնական նյութի բովանդակային կողմի ընկալման բարելավմանը, գիտելիքների երկարաժամկետ մտապահմանը, հասկացությունների, սկզբունքների, երևույթների ու իրադարձությունների ըմբռնմանն ու յուրացմանը: Սա, թերևս, կարելի է բացատրել ուսուցման գործընթացում սովորողներին համագործակցային ուսուցման ընձեռած խոսելու, քննարկելու ու փոխազդելու լայն հնարավորությամբ:

Համագործակցային աշխատանքը հնարավորություն է տալիս սովորողներին հանդես գալու այնպիսի իրավիճակներում, որոնցում նրանք իմացական նպատակներին հասնելուն համընթաց կարող են զարգացնել նաև սոցիալական, հաղորդակցական հմտություններ: Ընդ որում՝ փոքր խմբերով լավ կազմակերպված աշխատանքի դեպքում նախ հստակեցվում են սոցիալական հիմնական հմտությունները, ապա հետևողականորեն ուսուցանվում՝ ապահովելով նաև ինքնարժևորման բարձր մակարդակ [3, էջ 29-30]:

Այսպիսով՝ համագործակցային աշխատանքը ձևավորում է դրական դիրքորոշում, նպաստում ուսումնառության նկատմամբ սովորողների տեսակետների, մոտեցումների ու արժեքների բարելավմանը:

Համագործակցային դասի ստեղծումը ներառում է նախապատրաստական հետևյալ աշխատանքները՝ ուսումնական նյութի մանրամասն մշակում, գլխավոր գաղափարների ընդգծում, ուսուցման արդյունքների սահմանում, ուսումնական տարրերի բովանդակության, ծավալի, հաջորդականության և մեթոդների որոշում, լրացուցիչ նյութերի, առաջադրանքների և թեստերի մշակում, ուսուցանվող նյութի յուրացման ուղեցույց, որում պիտի լինեն գիտելիքների յուրացման չափանիշեր, ինքնաստուգման սանդղակներ, հրահանգներ:

Դիտարկենք համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառման օրինակ հայոց լեզվի բուհական դասընթացում: Հաշվի առնելով «Թիմային առաջադիմություն» մեթոդի ընձեռած հնարավորությունները և դրան համակցելով նաև «Խճանկար» մեթոդը՝ իրականացրել ենք բայի երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերի ուսուցումը: Ի տարբերություն բայի գլխավոր բաղադրյալ ժամանակաձևերի, որոնք

«կազմվում են -ում-ով անկատար, ապառնի, վաղակատար, հարակատար դերբայներով ու օժանդակ բայի ներկայի ու անցյալի ձևերով և ցույց են տալիս որոշակի ներկա կամ անցյալ ժամանակակետի համեմատությամբ կատարվող, կատարելի կամ կատարված գործողություն, եղելություն, ապա երկրորդական բաղադրյալ ժամանակները կազմվում են -իս-ով անկատարով, հարակատար, ապառնի դերբայներով և *լինել* օժանդակ բայով՝ ցույց տալով այնպիսի գործողություն, որ հարաբերականորեն է կապվում գլխավոր ժամանակների հետ» [6, էջ 456]:

Բայի երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերի ուսուցումը ուսանողների համար որոշակի դժվարություններ է առաջացնում, դրան գումարվում է նաև նշված ժամանակաձևերի կիրառական ցածր հաճախականությունը: Ուսուցման առաջին քայլաշարում կիրառելով «Խճանկար» համագործակցային մեթոդը, որի նպատակն է գաղափարներ մշակել ու զարգացնել ինքնուրույն աշխատելու, ստեղծագործաբար, քննադատաբար մտածելու հմտություններ՝ ուսանողներին բաժանել ենք չորս հենակետային խմբի՝ գերազանց առաջադիմություն ունեցողներին հավասարապես տեղաբաշխելով բոլոր խմբերում ու նրանց նշանակելով որպես փորձագետներ: Ըստ նախապես տրված հանձնարարության՝ վերջիններս պետք է ուսումնասիրեն իրենց ենթաթեմաները, հավաքեն անհրաժեշտ տեղեկատվություն՝ խմբի մյուս ուսանողներին օգնելով հարստացնել թեմային առնչվող իրենց նյութերը: Նախապես խմբերին տրվել են հանձնարարություններ՝ ուսուցանվող թեման բաժանելով ենթաթեմաների: Առաջին խմբին հանձնարարել ենք ուսումնասիրել ըղձական, երկրորդ խմբին՝ սահմանական, երրորդ խումբին՝ հարկադրական, չորրորդ խմբին՝ հրամայական եղանակների երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը:

Ուսանողների համագործակցային աշխատանքով ներկայացվում են «Խճանկարի» հետևյալ բաղադրիչները, որոնք փակցվում են գրատախտակին:

1. Ժամանակակից հայերենում ըղձական եղանակն ունի երկու գլխավոր կամ բացարձակ և վեց երկրորդական կամ հարաբերական ժամանակային ձևեր:

Ըղձական ապառնի	**Անցյալի ապառնի**
ծնված լինեմ ծնված լինենք ծնված լինես ծնված լինեք ծնված լինի ծնված լինեն	ծնված լինեի ծնված լինեիր ծնված լինեիր ծնված լինեիք ծնված լիներ ծնված լինեին
գրելու լինեմ գրելու լինենք գրելու լինես գրելու լինեք գրելու լինի գրելու լինեն	գրելու լինեի գրելու լինեինք գրելու լիներ գրելու լինեիք գրելու լիներ գրելու լինեին
ծնվելիս լինեմ ծնվելիս լինենք ծնվելիս լինես ծնվելիս լինեք ծնվելիս լինի ծնվելիս լինեն	ծնվելիս լինեի ծնվելիս լինեիր ծնվելիս լինեիր ծնվելիս լինեիք ծնվելիս լիներ ծնվելիս լինեին

2. Սահմանական եղանակի ամեն մի գլխավոր ժամանակի համապատասխանում են երկրորդական կամ հարաբերական ժամանակների երեք ձևեր, որոնք, ըստ անկատար, հարակատար ու ապառնի դերբայների արտահայտած իմաստների, դրսևորում են կատարվող, կատարված ու կատարելի կերպեր՝ հետևյալ ձևերով.

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ		
գնում եմ – գնացած եմ լինում գնում էի – գնացած էի լինում գնալու եմ – գնացած եմ լինելու գնալու էի – գնացած էի լինելու գնացել եմ – գնացած եմ եղել գնացել էի – գնացած էի եղել գնացած եղա	գնում եմ – գնալու եմ լինում գնում էի – գնալու էի լինում գնալու եմ -գնալու եմ լինելու գնալու էի –գնալու էի լինելու գնացել եմ – գնալու եմ եղել գնացել էի – գնալու էի եղել գնալու եղա	գնում եմ – գնալիս եմ լինում գնում էի – գնալիս էի լինում գնալու եմ – գնալիս եմ լինելու գնալու էի – գնալիս էի լինելու գնացել եմ – գնալիս եմ եղել գնացել էի – գնալիս էի եղել գնալիս եղա

3. Հարկադրական եղանակն արևելահայերենում ունի երկու գլխավոր կամ բացարձակ և վեց երկրորդական բաղադրյալ ժամանակաձև:

4. Հրամայական եղանակը արևելահայերենում ունի մեկ գլխավոր և երեք երկրորդական բաղադրյալ ժամանակաձևեր:

Հարկադրական ապառնի	**Անցյալի ապառնի**
պիտի գնամ – գնալիս պիտի լինեմ գնացած պիտի լինեմ գնալու պիտի լինեմ	պիտի գնայի – գնալիս պիտի լինեի գնացած պիտի լինեի գնալու պիտի լինեի
Հրամայական ապառնի	
գնա՛ գնացե՛ք	գնալի՛ս եղիր գնացա՛ծ եղիր գնալո՛ւ եղիր գնալի՛ս եղեք գնացա՛ծ եղեք գնալո՛ւ եղեք

Համագործակցային աշխատանքի հաջորդ փուլում խմբերի փորձագետներին փոխատեղում ենք: Նրանք հայտնվում են այլ խմբերում: Հանձնարարում ենք խմբերում իրականացնել քննարկումներ՝ բազմակողմանիորեն վերլուծելով երկրորդական բաղադրյալ ժամանակների կազմության ու կիրառության առանձնահատկությունները: Քննարկումից հետո փորձագետները վերադառնում են իրենց խմբեր: Մեթոդի կիրառման վերջին քայլում յուրաքանչյուր խմբից 1-2 ուսանող ամփոփում է երկորդական բաղադրյալ ժամանակաձևերի գործածության առանձնահատկությունները:

- Արևելահայերենում գլխավոր ժամանակների 14 ձևերի դիմաց ունենք 42 երկրորդական վերլուծական ժամանակաձևեր:
- Երկրորդական բաղադրյալ վերլուծական ժամանակները ցույց են տալիս խոսելու պահին գլխավոր ժամանակների նկատմամբ համընկնող, նախորդող, հաջորդող գործողություններ: Հարակատարով կազմությունները նախորդող ժամանակաձևեր են, որոնց արտահայտած գործողությունը նախորդում է գլխավոր ժամանակով արտահայտված գործողությանը, ապառնիով կազմությունները՝ հաջորդող ժամանակաձևեր, իսկ համակատար (անկատար երկրորդ) դերբայով կազմված ձևերը՝ համընկնող ժամանակաձևեր:
- Երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը աչքի են ընկնում սակավ գործածությամբ: Արևելահայերենում առավելապես կիրառվում են խոսակցական տարբերակում:

Այնուհետև «Հինգրոպեանոց ազատ շարադրանք» մեթոդով առաջադրում ենք հարց՝ մեկնաբանել Գուրգեն Սևակի հետևյալ տեսակետը հարակատար դերբայի

վերաբերյալ. «Շատ հաճախ հարակատար դերբայն իբրև որոշիչ դրվում է նաև այնպիսի գոյականների վրա, որոնց կատարած գործողության արդյունք ցույց չի տալիս, այլ որոնք կատարված այդ գործողության արդյունք են կամ նույնիսկ խնդիրը: Օրինակ՝ երբ ասում ենք՝ «Նամակ գրած մարդը եկավ», այստեղ *գրած* դերբայը ցույց է տալիս *մարդ* գոյականի հատկանիշը, իբրև իր իսկ կատարած գործողության (նամակ գրելու) հետևանքն իր մեջ պահող, ունեցող անձի (մարդը նամակ է գրել, մարդը նամակ գրողն է…), բայց երբ ասում ենք՝ *մարդու գրած նամակը*, այստեղ գրած դերբայը դրված է ոչ թե իր երբեմնի ենթակայի (մարդու), այլ երբեմնի խնդրի՝ *նամակի* վրա, և, իհարկե, ցույց է տալիս ոչ թե նամակի կատարած գործողության արդյունքի հարատևումը, այլ նամակի կրած գործողության արդյունքի հարատևումը, այսինքն՝ կրավորական սեռի իմաստ ունի և ոչ թե ներգործական» [7, էջ 299]:

Դասի կշռադատման փուլում ուսանողներին 5 րոպե ժամանակ է տրվում՝ բացատրելու բաղադրյալ երկրորդական ժամանակաձևերի կազմությանը մասնակցող հարակատար դերբայի իմաստային առանձնահատկությունը: Լսելով տարբեր գրառումներ՝ եզրակացնում ենք՝ հարակատար դերբայը ցույց է տալիս կատարված, բայց մնայուն արդյունքով հարակայող գործողության կամ եղելության գաղափար: Այդպես հարակատարը երկու նշանակություն ունի. մի կողմից այն վաղակատարի նման ցույց է տալիս ավարտված, կատարված գործողության կամ եղելության ընդհանուր գաղափար, մյուս կողմից ավարտված, կատարված գործողության կամ եղելության հարատևում:

Համագործակցային խմբերի կատարած աշխատանքը փակցնում ենք գրատախտակին՝ «Շրջագայություն պատկերասրահ» մեթոդով անդրադարձ կատարելու ու ամփոփելու համար:

Ամփոփում

Համագործակցային ուսուցումը արդյունավետ լուծում է դժվարընկալելի կամ որոշակի բարդություն ունեցող թեմաների ուսուցման ժամանակ: Համագործակցային տարբեր մեթոդների կիրառումը նպաստում է սովորողների համագործակցային, ճանաչողական հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը, ապա՝ որոշակի ինքնուրույնություն, ստեղծագործականություն է տալիս սովորողին ուսումնական նյութի յուրացման գործընթացում: «Սովորողների թիմային առաջադիմություն», «Խճանկար», «Շրջագայություն պատկերասրահում», «Հինգրոպեանոց ազատ շարադրանք» մեթոդների ու մեթոդական այլ հնարների կիրառումը բխում է ուսուցման կազմակերպման ձևից, ուսումնական նյութի բովանդակությունից, դասի տեսակից, սովորողների թվից ու այլ հանգամանքներից: Նշված տեխնոլոգիայի կիրառումը հնարավորություն է տալիս մեզ ձևավորելու համագործակցային միջավայր՝ պայմաններ ստեղծելով ուսուցման արդյունավետության համար: Սովորողների ակտիվ մասնակցությունն ապահովելու ու նրանց ինքնադրսևորման հնարավորություն ընձեռելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև համագործակցային խմբի մեծությունը: Խմբերում մեծաթիվ ուսանողների ընդգրկումը կարող է որոշակի սահմանափակումներ առաջ բերել. խմբի մեծությունը պայմանավորված է դասի նպատակից ու դրանից բխող խնդիրներից: Մանկավարժական նշանակությունից բացի՝ համագործակցային ուսուցման տեխնոլոգիան ունի նաև այլ կարևոր բաղադրիչ. նպաստում է սոցիալական, հաղորդակցական հմտությունների զարգացմանն ու կատարելագործմանը: Միմյանցից սովորելն ու միմյանց վստահելը, օժանդակելը համագործակցային մշակույթ է, որը դրսևորվում է մարդու ողջ կյանքի ընթացքում:

Օգտագործված գրականություն ցանկ

1. Դավթյան Մ., Գրիգորյան Ք., Արնաուդյան Ա., Զոհրաբյան Ա., Հովհաննիսյան Գ., Օհանովա Ի., Կրթական մշակման և ինտեգրման մոտեցումներ, ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, 2004:
2. Խաչատրյան Ս. Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006:
3. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, 2006:
4. Վեսա Պուրուկուրու, Համագործակցային ուսուցում. Վերապատրաստողի ուղեցույց, Երևան, 2006:
5. Հովհաննիսյան Մ., Մոդուլային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը հայոց լեզվի բուհական դասընթացում // «Կրթությունը 21-րդ դարում», թիվ 1(7), էջ 88-96:
6. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու: Ձևաբանություն, Երևան, 2004:
7. Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955:
8. Aperyan Y., The internationalization of higher education in Armenia //«Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա», 2021, N 1, էջ 79-87:

Получено: 25. 04. 2023 *Received: 25. 04. 2023*
Рассмотрено: 26. 04. 2023 *Reviewed: 26. 04. 2023*
Принято: 02. 05. 2023 *Accepted: 02. 05. 2023*

Journal "Education in the 21st Century", Vol1-9/1/, 2023

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Comercial 4.0 International License

371.335. 5 *https://orcid.org/0009-0005-5485-5594* **DOI:10.46991/ai.2023.1.154**

THE PECULIARITIES OF TEACHING SINGULAR AND PLURAL NOUNS IN ENGLISH AND RUSSIAN CLASSES IN MIDDLE SCHOOL

Lilit Sargsyan
Lecturer
Yerevam State University
Republic of Armenia
lilit.sargsyan@ysu.am

Summary

With the intensive growth of globalization processes in today's society improving the efficiency of foreign language teaching methods and techniques, acquisition of basic knowledge of foreign languages already from school onwards, takes a special place in the education system. For Armenian schools, this primarily concerns the two most widely spoken languages, Russian and English, which fluency is one of the basic requirements for employment in many areas of human activity in modern society. Foreign language learning involves many components, and one of the basic concepts in any language is the noun, its number, gender and case. The particularities of teaching one of the grammatical features of a noun, the singular and the plural in English and Russian in Armenian schools are examined in this article. The methods used in English and Russian language textbooks of Armenian schools were reviewed; difficulties that middle and high school students may encounter in learning the plural of a noun were identified; specific didactic materials were proposed which, in our opinion, will help to increase the efficiency of the process of mastering in the mentioned grammatical material in Armenian middle schools by systematizing the main rules of formation of plural in Russian and English with the help of vivid pictures and tables.

Keywords: foreign language, foreign language teaching, noun, plural and singular forms, plural, methods of teaching, didactic material, systematizing of learning process.